

բարձրանայ : Հիմա աշխրբիս վրայ մեզի ծանօթ անուանի ադամանդները ասոնք են :

Պորնէյին մէջ Սաթուն ռաճային ադամանդը , որ կրկըռէ 300 գրադ , հիմակուան ադամանդներուն ամէնէն մեծն է :

Սողոմի Թագաւորին գահին վրայ եղած ադամանդը որ Սահմազը վերցուց , կրկըռէ 279 գրադ , ու բանած է . Թաւեռնիէին ըսածին նայելով 11,700,000 ֆրանք կրնէ . ասոր ջուրը խիստ աղուոր , ու ինքը վարդագոյն է , ու կէս հաւկըթի ձև ունի կրսէ :

Ռուսի կայսեր գաւազանին ծայրը դրուած ադամանդը աղանիի հաւկըթի չափ է , ու 195 գրադ կրկըռէ . ասիկայ ջուղայեցի պարոն Շաֆրազին բերածն է : Տես պատմութիւնը երես 14 :

Ղաթրիայի կայսեր ադամանդը 139 գրադ է . գինը 2,600,000 ֆրանք :

Ֆրանսայի Թագաւորական Թունին վրայինը 136 գրադ կրկըռէ . գինն է 2,250,000 ֆրանք . ճանցողները կրկին կարծի կրսեն . բանուելէն առաջ 410 գրադ կրկըռէ եղեր , բայց խիստ շատ կտրուեր է . ձեւը բազմանկիւնի է . երկու տարի աշխատուեր է ասիկայ բանելու համար : Արսեն Թէ ասիկայ այնպէս աղուոր ջուր ունի ու այնպէս անարատ է , որ հիմակուան ադամանդներուն ամէնէն գեղեցիկն է :

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

### ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Տղաք դպրաբոսն խրիւնն օգոտը :

Ինչ և իցէ ազգի մը երջանկու Թեան հիմը՝ տղոց դաստիարակութիւնն է . առանց ասոր ոչ բարեպաշտութիւն կունենայ ազգը , ոչ մար-

դավարութիւն , և ոչ գիտութիւն : Իմէն ծնողք ալ շատ լաւ կը հասկընան Թէ դաստիարակութիւնը (Թէրպիլէն) որչափ հարկաւոր ու օգտակար բան է . բայց շատը չեն գիտեր Թէ իրենց տղոց աղէկ դաստիարակութիւն տալու համար ինչ ճամբայ պիտի բռնեն :

Տղոց դաստիարակութիւնը իրեք ճամբով կրնայ ըլլալ . մէյմը տունը վարպետ բերելով , երկրորդ՝ տղան դպրոց խրկելով , երրորդ՝ տղան տանը մէջ կը Թելով : Իսոնց մէջ ամէնէն ապահով ու օգտակար ճամբան՝ տղան դպրոց խրկելն է . վասն զի անով նախ՝ տղուն խելքը շուտ կը բացուի , ու իր հասակակիցները կամ դասընկերները անցնելու ջանքով խելօք կենալուն կամ ուսմունք սորվելուն մէջը դժուարութիւն չի մանար . մանաւանդ Թէ ուսմունքը իրեն անուշ կուգայ , ու խաղալով խնտալով առաջ կը Թայ : Արրորդ , դպրոցի մէջ դաստիարակութեան և ուսման ոճը աւելի աղէկ կրնայ պահուիլ քան Թէ տունը . անով տղան ալ ամէն բանի մէջ կարգով կանոնով շարժիլ կը սորվի . որ շատ հարկաւոր է բարեկիրթ մարդ ըլլալու համար . ո՛ր Թողունք որ անկարգ կերպով տրուած ուսմունքը շահ մը չընելէն զատ՝ շատ փնասներ ալ կը բերէ : Արրորդ , դպրոցի մէջ տղուն երես առնելը խիստ դժուար բան է . անոր ներհակ՝ պատիժ ուտելու վախն ալ կայ , որ մեծ խրատ է տղուն՝ խելօք կենալու և ուսման հետ ըլլալու : Ի՞նչ խօսքով . դպրոց գնացող տղան աղուոր նաւու մը կրնամանի որ ծնողքը առտուն պարապ կը ճամբեն , ու իրիկուան այլեայլ հարստութեամբ լցուած ներս կառնեն : Բաւական է որ դպրոցներն ալ բարեկարգ ըլլան , վարժապետներն ալ բարեկիրթ . անանկ որ իրենց վախճանը միայն ստակ վաստրկիլ չըլլայ , հապա մանաւանդ ազգին օգտակար ծառայութիւն ընել :

Վարպետը տունը բերելը աս աղէ-

կութիւնս ունի որ տղան շատ դուրս  
չելլելով, ու օտար տղաք շատ չտես-  
նելով՝ անոնցմէ չարութիւն չսորվիր :  
Իայց աս կերպին փաստները շատ ա-  
ւելի են քան թէ օգուտը . ինչու որ  
նախ՝ տղուն մինակութիւնը իրեն հա-  
մար խիստ ձանձրալի բան է . դաս-  
ընկերներ չունենալով՝ ուսումն ալ  
աւելի դժուար կուգայ իրեն . ուստի  
կամ ծոյլ ու թոյլ կըլլայ ամէն բանի  
մէջ, կամ ինքզինքը չարութեան տա-  
լով՝ քանի կերթայ կաւրուի : Ինչէ  
զատ, շատ դժուար բան է որ վար-  
պետը կամ երես չտայ տղուն, կամ  
խստութեամբ չվարուի հետը, ու տը-  
ղուն ծնողացը անհաճոյ չըլլայ, և  
կամ ծնողքը վարպետին կարգին ու  
կառավարութեանը չխառնուին :

Իսկ երրորդ ճամբան, այսինքն տը-  
ղոց տունը կենալը և իրենց ծնողքնե-  
րէն կըթուլութիւն և ուսում առնելը  
շատ գովելի ու փափաքելի բան է .  
վասն զի ո՞վ կրնայ տղուն աղէկու-  
թիւնը անանկ սրտանց ուղել ինչպէս  
իր ծնողքը . բայց մեղք որ ասիկայ ալ  
շատ դժուար է՝ որ ինչպէս պէտք է  
նէ յաջողի : Ինչու որ ծնողք սովո-  
րաբար բան գործ ունենալով՝ չեն  
կրնար տղոցը քով կենալ միշտ, ու ա-  
նոնց կըթուլութեանը ուշ դնել . ան-  
կէ զատ՝ ծնողական գութը թող չի-  
տար իրենց որ տղոցը հետ խստու-  
թեամբ վարուին . ասով տղաքը դիւ-  
րաւ երես կելլեն ու կաւրուին . թող  
որ տան մէջ ծառաներն ու աղախին  
ներն ալ շատ անգամ չար օրինակ կըլ-  
լան տղոց : Եւ որ աս արգելքները  
չըլլային, մէկհատիկ դաստիարակու-  
թեան ճամբան աս էր : Եւ աս բանս  
հետեւեալ պատմութենէն ալ կիմա-  
ցուի :

Պարսից Խոսրով Թագաւորը Միհ-  
րան անունով փոխարքայ (վեզիր)  
մը ունի եղեր : Իսիկայ օր մը Թա-  
գաւորին առջին կելլէ, “Տէր ար-  
քայ, քեզմէ շնորհք մը պիտի խըն-  
դրեմ, կաղաչեմ որ չէ չըսես”, կըսէ :  
Եւ Թագաւորը պատասխան կուտայ, թէ

“Ես քուկին ո՞ր խնդրուածքիդ չէ  
ըսեր եմ որ ատոր ըսեմ . զուրցէ տես-  
նենք”, : “Եւ խնդրեմ որ վեզիրու-  
թիւնս առնես ինծմէ”, կըսէ Միհ-  
րան : Իս անկարծելի խնդիրքին վրայ  
կըզարմանայ Թագաւորն ու կըշփո-  
թի . կըհարցընէ անուշութեամբ թէ  
“Պատճառը ի՞նչ է . ինծմէ կամ ու-  
րիշէն ի՞նչ գանգատ ունիս . ո՞ր բանդ  
պակաս է, կամ թէ ի՞նչ պաշտօնի  
կըփափաքիս”, : Պատասխան կու-  
տայ իմաստուն վեզիրն ու կըսէ .  
“Տէր արքայ, ես քեզի մէկ ծառայ-  
եցի, դուն ինծի տասնպատիկ փո-  
խարէն ըրիր . շնորհակալ եմ . հիմա  
մէկ պարտք մըն ալ ունիմ որ կու-  
ղեմ վճարել, ու քեզի աւելի հա-  
ճոյական ծառայութիւն մը ընել :  
Որդի մը ունիմ . ինծմէ զատ մարդ  
չկայ որ կարենայ սորվեցընել իրեն՝  
թէ ինչպէս օր մը ինքն ալ ինծի  
պէս ծառայէ քեզի”, : Թագաւորը  
կըզմայլի աս ազնիւ մտածութեանը  
վրայ . ու քիչ մը մտմտալէն ետեւ կը-  
դառնայ կըսէ վեզիրին . “Եւ ատ ա-  
ղէկ . միայն թէ կուղեմ որ իմ որ-  
դիս ալ առնես՝ քու տղուդ հետ  
դաստիարակես . վասն զի քեզմէ  
զատ մարդ մը չկայ իմ տէրութեան  
մէջ որ կարող ըլլայ սորվեցընել իմ  
որդւոյս թէ աղէկ Թագաւոր ըլլա-  
լու ճամբան որն է”, : Եւ առնէ Միհ-  
րան երկու տղաքը՝ կերթայ . մէյմըն  
ալ հինգ վեց տարիէն կըբերէ զիրենք  
Խոսրովին՝ մէկմէկէ աւելի կըթուլած,  
մէկմէկէ աւելի իմաստութեամբ զար-  
դարուած :

Ուրեմն ո՞ր ծնողքն որ այսպիսի ու-  
շադրութիւն կրնան ընել իրենց տղո-  
ցը վրայ, անոնք միայն իրենք կըթեն  
իրենց զաւկըները . չէնէ թող անհոգ  
չըլլան դպրոց խրկելու որ ետքը ոչ ի-  
րենք ցաւին փուճ տեղը, և ոչ տղոցը  
թշուառութեանը պատճառ ըլլան :

